

Արս. Կարինյան

ԶԵՐՆԻՇԵՎՍԿԻՆ ՀՆՈՐՅԱ ՌԱՍԻՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քուս դեմոկրատական ինտելիգենցիայի հանճարեղ հրապարակախոս Չերնիշևսկու գիտություն թյուները չովինխատ—պատմաբանների մասին ռեն կորցրել իրենց նշանակությունն այժմ էլ:

Ժամանակակից ֆաշիստներից չառ առաջ «ուսուխոմի» հակագիտական «թևերիան» առաջադրվել է, ինչպես հայտնի է, մի շարք կապիտալիստական երկրներում: Այդ «թևերիան» կարևոր էլակետ է եղել հատկապես չովինխատ մտածողների համար և հետո պատմական անցյալում էլ արտահայտել է բռնակալ—շահագործող դասակարգերի տենչերը: Եղել են իմաստասերներ և պատմաբաններ, որոնք հենց «ցեղական» հայեցողության գիւրքերից մեկնելով՝ ջանացել են հիմնավորել բռնակալական դործելակերպը ճշգրիտ ազդությունների նկատմամբ:

Ահա գրանցից մեկի—դերման պատմաբան Վերերի հետադոտություն առթիվ ժամանակին գրել է Չերնիշևսկին պատմագրական մի քանի հոգվածներ, որոնք որոշ չափով այժմեական կարող են համարվել այսօր էս: Այդտեղ մեծ հրապարակախոսն աշխատել է մոտենալ պրոբլեմին հետադական ինտերնացիոնալիզմի գրույթների վրա հարստված գիտության հստակ գիրքերից: Այդ հոգվածների և թուուցիկ գիտողությունների մեջ կան վեհալի գրույթներ: Անցյալ դարաշրջանի առաջին կիսամյակի գիտության տվյալների վրա հենվելով՝ Չերնիշևսկին մի շարք կարևոր պրոբլեմների մասին միմիայն ակնարկում է:

Հաճախ նա թուուցիկ և բնահետք կերպով է խոսում սոցիալական ներհակությունների և պայքարի մասին: Նստ անդամ ցարական ցենզորներն էլ թելադրում էին միայն թուուցիկ ակնարկներ նետել, այնինչ պրոբլեմի պարզորոշ մեկնաբանություն համար անհրաժեշտ էր ալելի կորուկ կերպով բնդդել հատկապես դասակարգային պայքարի դերը: Հոգվածների լեզուն հին ժամանակաշրջանի «եղուպոսյան» այն լեզուն էր, որի իրական իմաստը հասկանալի էր Չերնիշևսկու մշտական բնթերցողների համար: Չնայած այդ ամենին, այսօր էլ մեծ հրապարակախոսի հոգվածներն ու ակնարկները մեծ ազդեցություն են թողնում: Հուժանխոտական իդեալներով տոգորված աննկուն ունությունն դործիչը կարծես արձայանքում է մեր կարխայի մեծ իդեալներին—անարդ և վայրադ ֆաշիստների դեմ ուղղված տեղուցիոն մեծ շարժման հետ շաղկապված ունությունն գիտության ինտերնացիոնալիզմի վեհ պատգամներին...

1.

Անհրաժեշտ է բնդդել, որ իր արդ պաղտաբանական պայքարը հին օրերի չովինխատ—մտածողների դեմ ինքը՝ Չերնիշևսկին միշտ անմեհասերա

հերպոյ շաղկապում էր դերման ժողովրդի առաջավոր գիտության—կուլտուրայի մեծարման հետ։ Խարադանելով շովինիստներին, նա միաժամանակ պաշտպանում և ջատագովում էր դերման ժողովրդի առաջավոր հումանիստ—մասժողներին։ Ընթերցողներն էլ պիտի տեսնեին Չերնիշևսկու կարծիքով հակադիր երկու հոսանքների միջև տարածված մեծ խորխորատը։ Այդ ընթերցողները պիտի բժրանեին, որ գիտության անունից բարբառող շովինիստներն իրականում դերման ժողովրդի բացարձակ թշնամիներն են։ Չերնիշևսկին հիշեցնում է հատկապես, որ դերման ժողովուրդը անցյալում մղել է ազդային—ազատագրական պատերազմներ, ստեղծել է ժողովրդական կուլտուրա, համաշխարհային կուլտուրայի մեծագույն հսկաներին—Գյոթեին, Լեսսինգին, Շիլլերին։

«Սովրեմեննիկ»-ի մեջ տպագրված նյութերը պարզում են, որ խարադանելով դերման շովինիստներին, ուստի առաջավոր խնայողենցիան միաժամանակ միշտ արդ շովինիստների հայեցության հակադրում էր դերման ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների հայեցությունը։ Նշանակալից է հենց այդ կողմից Չերնիշևսկու մի ուսումնասիրությունը, որ նվիրված է մեծ հումանիստ Լեսսինգի կյանքի և ստեղծագործությունների մանրակրկիտ քննարկմանը։ Կանգ առնելով Լեսսինգի կյանքի ու գործունեության հիմնական գրվածքների վրա, Չերնիշևսկին նախօրոք բնորոշում է դերման ժողովրդի տաղանդավոր յուսավորչի խնայողենցիական խոստանքները։ Հայեցության կարեւորագույն մոմենտները։ Ճիշտ այդ միեւնույն ելակետից է մոտեցել Չերնիշևսկին նաև Գյոթեի ու Շիլլերի բաղմերանգ արվեստին։ Առանձին քննական հետազոտություններ երկու ականավոր այդ կյանքների մասին նա չի գրել։ Մեզ հայտնի են միայն մասնակի ակնարկներ, որոնք ցրված են առանձին երկասիրությունները կամ մատենագրական ուղենյիւղները մեջ։ Այդ թուուցիկ գիտողությունները կտրուկ են ու որոշ գրեթե միշտ։ Նրա հայտնի Գերբերը հրատարակում է Շիլլերի բանաստեղծությունների ոուսերեն թարգմանությունը, միաժամանակ թվականների մարտական ժուռնալ «Սովրեմեննիկ»-ում բավական բնորոշակ ակցենդիա է տպագրում ամբողջ ժողովածուի մասին։ Ահա հենց այդտեղ Չերնիշևսկին բնորոշում է, որ արեւմտյան կյանքները՝ Մոնտեսկիոն, Վոլտերը, Ռուսսոն, Գյոթեն, Շիլլերը, Դիկկենսը սիրելի գրողներ են ոուսերեն թերցողների ամենայայն առողիտորիայի համար... Շիլլերի պոեզիան — առում է նա, — հարազատ պոեզիա է մեզ համար»։ Ժուկովսկուն, նկատում է Չերնիշևսկին, հաճախ համեմատում են Շիլլերի հետ։ Ճիշտ է, չատ լավ է ժուկովսկին թարգմանել շիլլերյան բաղմաթիվ բանաստեղծությունները։ Իայց անցած հին որերի ներբողագիր էր ժուկովսկին։ Շիլլերը Գերբերի և Սոուտիի նման պոետների բնկերակիցն էր, այնինչ շիլլերյան պոեզիայի մեջ չկա սենտիմենտալիզմ։ Դուչկինի նման՝ Շիլլերն էլ ազնիվ և ուժեղ մարդու երգիչ է, մի երգիչ, որի համոզմամբ պոեզիան համայն մարդկության վերածնության նպաստող գործիք էր մի ազդակ արիւթի դառնար։ Անսահման սիրով և հարգանքով խոսելով Լեսսինգի, Գյոթեի և Շիլլերի մասին, Չերնիշևսկին միեւնույն ժամանակ շատ վճռական կերպով դատաւիտում է դերման շովինիստ գործիչներին և մտածողներին։ Կանգ առնելով արդ տիպի «ազդասերներին» վրա, նա միշտ շեշտում է, որ դրանց շովինիզմը և շովինիստական սնամոռությունը մեծագույն հար-

ված են հասցնում ժողովրդական գանդվածներին: Մարդկային թշան, համա-
նիցմի, ինտերնացիոնալիզմի դրոշն է պարզում սուս սեպուցիոն գեմոկրա-
տիայի մեծ գիտնականը բունակալ ուժերին սպասարկող թուր գործիչնե-
րի դեմ: Այդ մեծ դրոշի ներքո են առաջափառ սուս գրողներն ու գիտնական-
ները կոփի ելնում սեպուցիոն հոսանքների դեմ: Հեշտ գործ չէր այդ: Շատ
դժվար էր ցարական գեապոտիայի դաժան օրերին ամեն բան պարզ ու ո-
րոշակի կերպով ասել: Անհնարին էր հրատապ և այրող պրոպեմաների
հստակ յուսարանության մասին խոսել սնդամ: Հաճախ անհրաժեշտ էր
լսել և խորհրդավոր այդ լուսթյունն էլ դարձնել սե անցյալի քրմապետ-
ների դեմ ուղղված արշավ:

Մի ուղի էր միայն մնում արժատական գեմոկրատիայի գիրքերի վրա
կանգնած ժուռնալիստների համար: Վաղուց արդեն հայտնի էր այդ ու-
ղին: Անհրաժեշտ էր խարել և կուրացնել ցենզորներին: Արդյուն էլ վար-
ժում էին գրողները: Նկարագրում էին արեւելյան կամ արեւմտյան երկր-
ների կյանքը ու տպա հետու վայրերի մթին երեւոյթների խորագաճման
նոյրված ակնարկների միջոցով որոշում էին իրենց գիրքը հարադառ մի-
ջավայրում իշխողների հանդեպ: Հատկապես Չերնիշենսկին ճիշտ այդ ձեով
է մոտեցել հայրենի իրականության բացառական երեւոյթների դատափետ-
ւանը: Գրական սեցենդիաներ նա չաս-չատ է գրել—գրել է նույնիսկ ան-
արժեք գրքերի մասին: Այդ սեցենդիաներն ուչադրով վավերագրեր են
այսօր: Անարժեք գրքերի առթիւ Չերնիշենսկին հաճախ կարողացել է
քննական գիտողություններ նետել ժամանակի հրատապ և «այրող» պրո-
պեմաների մասին: Արդօրինակ թուցիկ ակնարկների մէջ կան նախնի «ուս-
միստների» դեմ ուղղված, հատկապես գերման հին շովինիստների դեմ
սրված բախական նշանակալից գիտողություններ: Հետադարձում, ութուս-
նական թվականներին, կրկնելով հիմնականում իր նախնական գիտողու-
թյունները, նա գրում է ամէլի բնդարձակ գիտական-բաղադական էր-
կուրաներ աղղությունների և ցեղերի մասին:

Թե ո՛րքան հետաքրքրական են վերոհիշյալ թեղիտները, այդ մասին
երկու կարծիք լինել չի կարող: Երբ հայտնի Բոտկինի նամակները Իսաբո-
նիայի մասին յույս են տեսնում տառնձին հրատարակությամբ, Չերնիշե-
նսկին բարձր գնահատական տալով Բոտկինի գրքին, տպադրում է բնդար-
ձակ սեցենդիա, ուր խոսում է ի միջի այլոց նաեւ «աղղային հողերանու-
թյան» մասին: Ահա հենց այդտեղ նա որոշակի կերպով ասում է, որ չկան
բնաձին աղղային հատկություններ: Մի ամբողջ շրթանի բնակիչներ—նկա-
սում է նա—կրեւտիներ են բացառապես շնորհիւ անրարեհաջող հանդա-
մանքների: Այսպես կոչված «ծույլ»—հարբեցող իտյանդացին մեկնում է
հյուսիսային Ամերիկա և նոր բնափայրում գառնում է եռանդուն ու խելացի
աշխատավոր: Մուլության և անրարոյականության դարդացմանը նպաս-
տում են ոչ թէ կրիմայական պալմանները կամ բնաձին հատկությունները,
այլ պատմական պալմանները: Փոխում են ժողովրդական կյանքի պայ-
մանները—փոխում են և ժողովրդական բարքերը:

Չերնիշենսկին ամենակտրուկ կերպով շեշտում է, որ այս կամ այն աղ-
ղության «հողեկան հատկություններ» ստեղծվում են հասարակական որոշ

միջնորդությամբ, միշտ փոփոխվում են և միշտ էլ ենթակա են պատմական պայմանների ազդեցությանը: Խոսելով, օրինակ, Բուսանիայի մասին, նա հիշեցնում է ընթերցողներին, որ խաղանայինների «ծուլություն» օժանդակել է մեծագույն չափով ինքն խաղանական անուղիղ կառավարությունը: Այլևի մանրամասն շոշափում է միևնույն պրոբլեմը 1857-ին տնտեսապետ Բարսաբի մի ճառի առթիվ (ժողովրդական կապիտալի մասին), հրատարակված «Սովրեմեննիկ»-ի մեջ միևնույն 1857-ին:

Չերնիշևսկու դիտարկություններն աշխարհ էլ բարդ չեն: Նա սկզբից արդեն հիշեցնում է, որ իբրև էլ յով են հայանի խաղանական, խաղական, ֆրանսիական, գերմանական և անգլիական ազդությունների տարբերությունները: Քաղաքատնտեսության մեջ—նշում է նա—երկու տարբեր դարացիներ (Մալխուս, Գոգոլին) տարբեր կերպ են մոտենում ազդեցիկ տարբերությունների ստղակների բնութագրմանը: Կան մարդիկ, որոնք կանգ են առնում օրդանիդի ցեղական հատկանիշների վրա և դանում են, որ յուրաքանչյուր ազդություն ունի բնածին օրդանական առանձնահատկություններ: Միանգամայն անհիմն է ալյոթինալ մեկնարանությունը: Այսպես կոչված եվրոպական ազդությունները միանման ֆիզիկական հատկանիշներ ունեն և, չնայած դրան, դանադանում են միմյանցից: «Մենք համոզված ենք, որ ներքին առանձնահատկություններ էլ ստեղծվել են ոչ թե օրդանական, այլ պատմական գործոնների շնորհիվ»: Խոսում են հաճախ դանդի, զեմֆի, ծածրակի, մարդու տարբերությունների մասին: Միևնույն ազդության ներհակ դասակարգերի ներկայացուցիչներն սովելի շատ են տարբերվում միմյանցից, բան եվրոպական ազդությունները: Չսոյոյիական համեմատություններն ու ֆիզիոլոգիական փոփոխությունները շատ քիչ բան են պարզում: «Պատմական վիճակը» և պատմական պայմաններն են նպաստում աշխարհ կոչված առանձնահատկությունների պարզացման: Այդ ալաներ է: Այդ են հաստատում թե՛ պատմության և թե՛ մանավանդ համեմատական ֆիզիոլոգիայի հանրահայտ փաստերը: Համեմատական ֆիզիոլոգիայի փաստերը մաթեմատիկական ճշտությամբ ապացուցում են, որ հետու անցյալում ոչ մի տարբերություն եվրոպական անվանիդ «ցեղի» առանձին ազդեցիկ ստորաբաժանումների միջև չի եղել:

Այնուհետև անցնելով աշխարհադրական պայմանների, առանձնապես կլիմայի ազդեցությանը, Չերնիշևսկին բաղձաթիվ փաստերի վրա հենվելով՝ ջախջախում է հնօրյա «ոստիոսների» հիմնական դրույթները: Ազդության «տեմպերամենտի» վրա, —նկատում է նա, —իհարկե որոշ ազդեցություն է թողնում երկրի կլիման: Բայց չի կարելի երբեք մոռանալ, որ ժամանակակից Բուսանիայի սահմաններում ապրող աշխարհի խաղանայինների նման չեն—այնինչ հին հռոմայեցիներն աշխարհ անդլիացիներից չէին դանադանում: Արարները ներկայումս համարվում են «ծուլ» և պասիվ, իսկ հետու անցյալում այդ միևնույն արարները եղել են շատ ախիվ և ետանդուն: Ահա նման փաստերը թելադրում են այլ կերպ մոտենալ պրոբլեմի լուսարանությանը: Հիմնական ազդակը պիտի համարվի երկրի «ֆալաֆալիական կառուցվածքը», կամ ժողովուրդների «քաղաքացիական հարաբերությունները»: Դուցե և այդ մեկնարանությունն անորոշ

¹ Н. Г. Чернышевский, Полн. собр. соч., т. III, 49 521.

Եւ ու չի հաշտութիւն միեւնոյն ՉԼԵՆԻՇԵՍԿԻՆ Կողմից առաջադրւած դրույթների հետ: Երբ ամէլի մէծ ուշադրությամբ ենք մոտենում նրա դիտողությունների իրական իմաստի քննարկմանը, տեսնում ենք, որ նա, նկատի ունենալով «կեցութեան» դերը, ակնարկում է արտադրողական ուժերի և անտեսական հարաբերությունների վրա խառնւած «քաղաքացիական կառուցվածքի» մասին: Միեւնոյն ռեցենզիայի մէջ նա կանգ է առնում ժողովրդական տնտեսութեան, ներհակ հասարակական դասակարգերի, դիշաւիչ պատերազմների վրա: Հին օրերի շովինիստների խաղաղամանր նսկրւած թեորիական դիտողությունները նա չաղկապում է իշխող դասակարգերի բռնակալական քաղաքականութեան դատափետման հետ: Իրադական դորամատերն ստեղծւում են, —ասում է ՉԼԵՆԻՇԵՍԿԻՆ, —ամէլի հաճախ «ներքին ուժեր» սանձահարելու նպատակով: Պատերազմը մեծագույն չարք է: Օգտակար և արդար եմ միայն այն պատերազմները, որոնք մղւում են հայրենիքի պաշտպանութեան համար: Բայց պատերազմները սեփականատիրական կարգերի պայմաններում անխուսափելի են: Եւրոպական երկրները պատերազմներից կհրաժարվեն այն օրը, երբ քաղաքական իշխանությունը կանցնի «աշխատանքի մարդկանց» շահերը պաշտպանող ղեկավարների ձեռքը: Ֆարակսն ցենզուրայի յուրահատուկ պայմանները չեն թույլատրում ՉԼԵՆԻՇԵՍԿԻՆ ամէլի պարզորոշ կերպով արծարծել ղեմակրատական շրջանների պատգամները: Ընթերցողների համար այնուամենայնիւ պարզ էին վորոհիչայ ակնարկներն էլ:

Եթէ ՉԼԵՆԻՇԵՍԿԻՆ այդ խոհերը, անշաւի դրույթ տեսնով և «դիպլոմատիկական ոճով» արծարծւած խոհերը չաղկապենք նրա այլ երկերի, հատկապէս Միլի Գաղաքատնտեսութեան թարգմանութեանը կցւած հայտնի ծանոթարտությունների մէջ ցրւած ակնարկների հետ, ապա մեզ համար բացահայտ կդառնա մէծ ռեսուրսներն մտածողի ինտերնացիոնալիստական հումանիստական հայեցութեան ամբողջ հյուսվածքը: Այդ հյուսվածքի անհրաժեշտ մի մասնիկն են կազմում շովինիզմի, մարդատյացութեան, ցեղական անտադոնիզմի, հակադիաական բանդադուշանքների դեմ ուղղւած միջոցառումները և շեշտակի հարվածները: «Ուրեմն ենթեկ»-ի մէջ հիմնական թմայականներից սկսած այդ վայրադ շովինիստներից ամէլի հաճախ հիշատակւում են դերմանական շովինիստները: Պատահական չէր այն, որ Գերցենը և Մայտիկով-Շչեդրինը մեծագույն ատելութեամբ խոսելով բայթեան բարոնների մասին, ատելի ցարիզմն էլ համարում էին դերմանական ղինաստիայի ստեղծարարութեան: Պատմական տեսակետից դա միամիտ մեկնութեան էր, բայց այդ յուրահատուկ մոտեցման մէջ հնչում էր ժողովրդական ատելութեան արձագանքը: Այնքան ուժեղ էր այդ ատելութեանը, որ նույնիսկ դերման կույտուրայի առաջափոր ներկայացուցիչները մերթ րնդ մերթ պատասխանատւութեան էին կանչւում իրենց ստոր ու դադրելի հայրենակիցների փոխարեն: Ահա դրա համար էլ կովի Էյնելով դերման շովինիստների դեմ, ՉԼԵՆԻՇԵՍԿԻՆ միաժամանակ ներքող էր ձգնում դերման ժողովրդի լավագույն և առաջափոր տրադիցիաների պատգամախոսներին: Առանձին ուժով էր նա ցուցադրում Շիլլերի բանաստեղծութեանների խոշոր արժեքը, աշխատում էր շնորհալի շիլլերյան թույլ երկերի և մանաւանդ նրա հետադա կոյտուցիայի վրա: Բնդդում էր Շիլլերի հայտնի սխեմների ուղղուցիոն արժեքը: Միեւնոյն այդ նպատակով նա անհուն

հիացմունքով և մեծարանքով լեցուն էջեր և նվիրում էկասինդին և նորից հիշեցնում է էկասինդի ստեղծագործությունն սեռուցիոն նշանակություն մասին: Ընթերցողներին համար պարզ էր, որ մարտաշունչ այդ էկասինդը հակադրվում է գերման սեակցիոն մասժոպներին, վանդալիզմի միջնադարյան իմաստասիրություն ջահակիրներին, բոլոր շովինիստներին վայրադրանակին: Այդ ընթացիկ գիտեր, որ քննադատություն որոշ սլաքներ նետվում են նաև սեյակյան շովինիստներին դեմ, որոնց հալեցություն ալունքներն իրականում կտրված չեն գերման շովինիստներին դալանած իդեոլոգիայի հիմնական սկզբունքներից: Հին այդ օրերին ուսւ ժողովրդի տաճարափոր տարրերին համար ակներև էր, որ «ոստիատական գիտությունը» ցնդարանություն է և գիտություն դեմ ուղղված սեակցիոն մի տրչավ...

»

Նշանակալից է այն, որ հնօրյա գերման ոստիատներին ծավալուն քննադատության Չերնիշևսկին անցնում է շատ ուշ—հետո աքսորավայրից վերադառնալուց հետո, արդեն ձերույթյան օրերին, նոր աքսորավայրում Աստրախանում: Վաթսուն տարեկան էր Չերնիշևսկին, հյուժված և անչափ հոգնած սոսկայի աքսորից հետո: Հիվանդ էր նա Աստրախանում և գրեթե միայնակ: Սորհրդափոր և շատ փտանդափոր սեռուցիոնների համրով էր վայելում: Սեակցիայի մռայլագույն տարիներն էին սթսունական թվականները: Դադարների ինտելիգենտները սոսկումով էին մտանում հետո Սիրիրից եկած սեռուցիոններին:

Այդ նոր աքսորավայրում Չերնիշևսկին սկսում է թարգմանել գերման պատմաբան Վերերի «Համաշխարհային պատմությունը»՝ բացառապես իր նյութական կացությունը բարձրելու նպատակով: Այդ մասին պատմում է Չերնիշևսկին իր նամակների մեջ: Վերերի հատորների հրատաակիչը—բաւ երևույթին Պիպինի թելադրանքով—որոշում է ամեն կերպ աջակցել Չերնիշևսկուն: Դա Սոլդատենկովն էր, շատ ուշիմ մի դեմք, որ իր հրատարակած գրքերի շնորհիվ պատվափոր տեղ է գրավում ուսւ կուլտուրայի պատմության մեջ: Սկզբում Չերնիշևսկուն թվում էր, թե Վերերն իր առանձին թերություններով հանդերձ՝ բարեխիղճ և ուշադրավ պատմաբան է: Հետագայում ավելի մանրամասն ուսումնասիրելով Վերերին, նա վճռական կերպով հանդում է հակառակ եզրակացություն: 1885-ին արդեն մի նամակի մեջ նա նկատում է, որ բառացի թարգմանություն փոխարեն ավելի նպատակահարմար կլիներ կրճատել Վերերի գիրքը, ուս տեղտեղ նույնիսկ «լրացնել» առանձին մասերը: Միևնույն թվականին նա կրկնում է, որ լավ կլիներ թարգմանությունը կցել ուսւ ընթերցողների համար հասկանալի մի «չարունակություն»: Դիչ հետո Չերնիշևսկին նորից գրում է Սոլդատենկովին և առաջարկում կրճատել ու փոփոխել տեքստը առանձին հատվածները: Գրքի գերմանական ընադիրը—ասում է նա—օտար և անհարադատ է ուսւ ընթերցողների համար: Վերերի մաս կա ավելորդ շատախոսություն և զատարկարանություն: Այդ անպետք բալլաստն անհրաժեշտ է դեն նետել, իսկ աչքի ընկնող թերություններն էլ հարկափոր է շտկել: Մի քանի անգամ Չերնիշևսկին առաջարկում է հրատարակել Վերերի վերամշակված և յրացված նոր տեքստը: Բոլոր նամակների հիմ-

նական իմաստը պարզ է: Ինչպես երևում է, անպորը ու մեղմ տրամադրությամբ մոտենալով Վերերի թարգմանության դործին, Չերնիշևսկին հետադաժում սկսում է խարաղանել ինքն իրեն: Չայրույթը Վերերի դեմ աստիճանաբար ուժեղանում և ուժանում է: 1887-ին Բարիչևին գրած նամակում նա շեշտում է, որ վճռական կերպով որոշել է 7-րդ հատորի տեքստին կցել իր հոդվածը (ցեղերի մասին) և այնքան ստվար մի հոդված, որ ընթերցողների համար պարզորոշ դասնա շոշափված պրոբլեմի կարևորությունը: Եթե, ավելացնում է Չերնիշևսկին, ընթերցողները կարևոր և անհրաժեշտ համարեն, կգրեմ ավելի ստվար հոդվածներ: «Կայսրի է կրճատել Վերերի Պատմության ավելորդ էջերը և որոշ տեղ շահել հոդվածների համար»:

Հետաքրքրական է հատկապես Գոյցեյին 1887-ի սեպտեմբերի 27-ին գրված ընդարձակ նամակը: Արդյունք Չերնիշևսկին խնդրում է մեծ ուշադրությամբ կարդալ հատկապես «ոսասանների» մասին գրված իր հոդվածը: Այժմ, նկատում է նա—մողա է դարձել ազդային տարրերությունների մեկնարանության համար կանգ առնել օրդանական հատկանիշների վրա: Դա վարկենի ֆանտազիա է և տգիտության հետևանք: Այս քիչ հետաքննության նամակում նշվում է, որ անհրաժեշտ է ցուցադրել շտիպնիստ պատմաբանների հակադրական հայեցողությունը:

«Потрудитесь просмотреть эту о расах, помещенный, в виде предисловия к переводу VII тома „Всеобщей истории“ Вебера. Все в этом этюде сводится к чему?—«Нет никаких удобоуловимых нашему наблюдению различий в умственной и нравственной организации черной, желтой и белой рас. Всякое объяснение какого бы то ни было исторического факта особенностями умственной или нравственной организации рас—дикая фантазия, отвергаемая наукой. Эти объяснения теперь в моде, но они—продукт невежества»¹.

Անհնարին է—ասում է Չերնիշևսկին—որոշել սեռամորթ, գեղին կամ սպիտակամորթ «ոսասանների» այսպես կոչված «մտավոր-բարոյական» բնածին հատկությունները: Անհնարին է ոսասական մեկնակետից մոտենալ մոդոֆորդների պատմության և պատմական փաստերի մեկնարանության համար հենվել մտացածին ոսասական հատկանիշների վրա: Թե որքան մեծ նշանակություն էր տալիս Չերնիշևսկին իր դիտական-հրապարակախոսական նոր պրոպոզիցիան, այդ շատ լավ տեսնում ենք նրա ասարախանյան նամակներից: Այդ նամակները կենդանի գոկումենտներ են:

Արդեն 1887-ին Չերնիշևսկին հիշեցնում է, որ շատ կուղենար հիմնովին վերամշակել վերերյան բոլոր հատորները: Այս շեշտում է, որ ինքն էլ կարող է և ցանկանում է գրել ինքնուրույն մի կուրս—համաշխարհային պատմության մի նոր ձևանարի: Հետադաժում նա գրում է, դարձյալ Աստրախանից, որ ուրախությամբ կկազմեր էնցիկլոպեդիական բառարան

¹ Н. Г. Чернышевский, Литературное наследие, т. III.—Письма. 1930, էջ 227. Դեռ նաև էջ 175, 449 և հետևյալները

- նույն տեղ, էջ 227.

ռուս բնթերցողների համար: Ազգային ժառանգության համար, որ Ասարախանում Չերնիշևսկին հանդում է շատ որոշ եզրակացություն: Նա առնում է, որ փաստադրական ժողովածուների մեջ էլ նշմարելի է թևորիական լուսաբանություն և դասակարգային մտայնություն ուրույն ազդեցություն կնիք: Տեսնելով այդ, որոշում է գրել պատմություն մի նոր ձևով, դիտական էքսկուրսներ, անդամ հոգիվածներ՝ ասրագա կնքիկությունից լուսաբանի համար: Պատահական չափով համարել այն, որ խոսելով Չարլզ Դարվինի առնումների մասին, նա հանդամանորեն կանգ է առնում հասկացված սոցիալ-դարվինիստների վրա և մերկացնում դրանց կողմից առաջադրված հասարակագիտական դրույթների ուսկցիան բնույթը: Նորից նա հիշում է Մալթուսին և այդ միևնույն Մալթուսի անունն էլ, ինչպես 1857-ին, չաղկացում է դերման շովինիստ պատմաբանների հակադիտական խոհերի հետ: Վերերի Պատմության 7-րդ հատորին կցված գիտական էքսկուրսների մեջ նա կանգ է առնում բազմաթիվ ազգայնական, պատմական, ֆիյոլոգիական փաստերի վրա: Տարբեր թեմաներ արծարծող բնդարձակ այդ հոգիվածները շատ սերտ կապակցված են միմյանց հետ, մի հիմնական դադափար են հիմնավորում և ուղղված են հնորյա ուսուստ պատմաբանների հիմնական դրույթների դեմ: Չերնիշևսկու այդ հոգիվածների մեջ կան չիճեղի, հնա-ցած, անդամ անրնդունելի թեղեր: Նա հենում էր վաթսուներանյոթանասունական թվականների գիտություն տվյալների վրա: Լեզվադետները դերասանց մեծամասնության համար հնդեբոսական թևորիան այդ մամանակ մեծագույն դիտական նորույթ էր: Պատմության, ֆիյոլոգիայի և էթնոգրաֆիայի բնավայրում կատարված հետազոտություններն էլ հաճախ այդ թևորիայի դրույթները համարում էին անփիճելի գիտական օրենքներ:

Վերերի Պատմության 1-ին հատորին կցված կարճ առաջաբանի մեջ շեշտվում է, որ Վերերը զատ բարեխիղճ և շատ գիտնական մաղ է, թեև ոչ հանճարեղ է և ոչ էլ ինքնուրույն մտածող: Հետագայում, 1887-ին, ինչպես ասացինք քիչ առաջ, Չերնիշևսկին հանդում է միամտամայն հակառակ եզրակացության և հիշեցնում է որ իրեն իարել են դերմանական ուղեկցություններ: Շատ զգուշ տոնով միայն առաջին այդ հախարանի մեջ արձանագրվում են «հակադիտական երկու էլեմենտներ»: Խոսքը նախ վերացական տրանսցենդենտալ փիլիսոփայության և ապա ազգայնական սնափառության մասին է:

Ինչպես առնում ենք, շատ մեղմ է գիտյնողը: Ավելի անողոր է 6-րդ հատորին կցված նախաբանը: Չերնիշևսկին ասում է, որ զգվելի են «Պատմության» այն էջերը, որոնք նվիրված են իտալական արչափների նկարագրությանը: Վերերը հետևել է դերման պատմագիտության մեջ իշխող տրադիցիաներին: Ազգայնական սնափառությունը վատ բան է և այդ սնափառությունը տարվել են ուրիշ ազգությունների ներկայացուցիչներն էլ: Գերման պատմաբաններին հիայնում են իրենց միջնադարյան նախահայրերի հաղթանակները: Գանկայի է, որ դերմանական ժողովրդին հայտնի լինի ավելի ճշգրիտ պատմություններ հին դեպքերի մասին: Չէ՞ որ դերման գիտնականներից շատերը ժամանակին ավելի ճիշտ են մոտեցել հատկապես իտալական արչափների բնութագրմանը: Այդ արչափանքները մեծ հաջողությամբ հասցնելով իտալացիներին, միամտամանակ մահաբեր են եղել հենց իրենց՝ դերմանացիների համար... Գողենչտառափենների գիտաստիան քայքայել է

դերմանական պետությունը և ինքն էլ նեղվել անդունդ: Անհրաժեշտ է նկատում է Չերնիշևսկին—որ կրթված դերմանացիներն այդպես մոտենան անցյալին: Ապա թեթևակի ակնարկելով դերման պատմաբանների մասին նա ընդդրում է, որ Վերերին թարգմանելիս դուրս է գցել խալական արժանքների մասին նեղված բաղձաթիվ «լիրիկական տիրադերք»—դերմանական գեղքերի նկարագրության նվիրված բոլոր այն «մանրունքները», որոնք հետաքրքրական չեն: Լակոնական և շատ զգուշավոր լեզվով գրված առաջարանի մեջ ցուցադրվում է, ինչպես տեսնում ենք, դերման պատմաբանների շփոթությունը: Այնպիսի առել այդ շրջանում՝ Չերնիշևսկին տակավին չէր փոփոխվում: Անհրաժեշտ էր հաշիվ առնել նախ ցենզորներին և ապա Պատմության հրատարակչին՝ Սոյգատենկովի ցանկությունը և վերաբերմունքը: Երբ հետադառնում հայտնի է դառնում, որ կարելի է Վերերի Պատմությանը կցել ընդարձակ հավելվածներ, Չերնիշևսկին մշակում է մի խանի պատմագիտական ակնարկներ, որոնք տպագրվում են Պատմության տարրեր հատորների մեջ: Ես առանձին նախակ է գրում այդ հոդվածների մասին և խնդրում է հայտնել, թե ինչպես են արձագանքում ընթերցողները: Նոր տոն է հնչում Չերնիշևսկու մի շարք նամակների մեջ Վերերի և վերերյան տիպի պատմությունների նկատմամբ:

«Ничего нецензурного я не напишу. Но мои понятия о ходе человеческой истории во многом неодинаковы с теми, которые господствуют в ученом мире. Например, разницы между расами, тем более между народами одной расы, между сословиями и проч. в их исторической жизни я объясняю исключительно историческими фактами, а не расовыми, народными или сословными особенностями, рассуждения о которых считаю пустыми фантазиями самохвальства вообще белой расы, в частности европейцев, господствующих народов Европы, ученого сословия этих народов.—Далее, я считаю результаты насилия вредными, всегда для всех вредными»¹.

Չերնիշևսկին ոչ միայն կրճատում է որոշ հատվածներ, այլև դեն է նետում բաղձաթիվ էջեր: Նա առաջարկում է ընթերցողներին քննադատաբար մոտենալ վերերյան «իմաստասիրությունը», իսկ քիչ հետո գրում է իր առաջին ակնարկը «ոստաների մասին»:

Աստրախանում էլ Չերնիշևսկին իրականում աքսորական էր: Նա ստիպված էր հաշիվ առնել իշխող բաղադրական պայմանները: Գիտական-հրապարակախոսական ելույթների համար անհրաժեշտ էր մշակել հարմարագույն տոն և գրելաձև: Այս «առնել» նա գտնում է, երբ գետեցում է իր հոդվածները Պատմության առանձին հատորների մեջ: Մենք արդեն տեսանք, թե ինչպես էր խոսում նա 1857-ին «Սովրեմեննիկ»-ի մեջ հնորյա շփոթությունների արդումենտների մասին: Վախճանական թվականների արժատական ինտելիգենցիայի մոհիկանները ժամանակին խարաղանել են դերման բարոններին և դրանց դրչակներին: Գերման վանդալները միշտ էլ ատելի և արգահասելի են եղել ողորմողո-

¹ Чернышевский, Литературное наследие, т. III. Письма.—Госиздат. М.-Л. 1930 г., էջ 174.

միջոցի առաջավոր ներկայացուցիչների համար: Պրանա-պրուսական պատե-
րազմի օրերին և այդ պատերազմից հետո գերման շովինիստների պոռո-
տախտակներին ուղեկցում է: Համաբնական, ունակության տարիներին
սրկման զեմկրատիայի ամենայն հատվածների համար ակներև է
դառնում, որ ամսոր-գերման ժողովուրդները ցարական ժողովուրդների
ընկերակիցներն ու զինակիցներն են:

Այդ ամենը լավ հայտնի էր Չերնիշևսկուն: Նոր աքսորավայրում՝
Ստրախանում էլ նա ապրում էր մարտական իդեալներով: Բնորոշ է այն,
որ հենց այդ նոր աքսորավայրում էլ նա որոշում է հումանիտական
խնամակցության իդեալների հայեցողության դիրքերից բարձրել շովինիստ պատ-
մարաններին: Ես արդեն ասացի, որ իր նամակների մեջ նա ակնարկում է
պատմական ինքնությունը նոր ձևերով: Գուցե, կարելի է ասել,
որ վերերյան հատորներին կցված հոդվածների մեջ նկարագրվել են հենց
ասպիցսայն այդ դրքի ներածության մի թանի էական կոնտուրները: Ըստ
երևույթին ընդարձակ այդ ներածության մեջ Չերնիշևսկին կամենում էր
կանոն ասել պատմության փիլիսոփայության հիմնական պրոբլեմների
մասին: Նա ինքն էլ ընդգծում է, որ ցանկանում է բնութագրել համաշխարհ-
հային պատմության մասին ստեղծված մի թանի գիտական հասկացողու-
թյունները:

Վերերյան Պատմության 7-րդ հատորին կցված ուսումնասիրական
ակնարկի մեջ՝ խոսվում է «ոսասանների» մասին: Չերնիշևսկին հիշեցնում է
ընթերցողներին, որ հին օրերի ոսասանական թևերից կառուցող դիտուն-
ները գեղարվարվել են դիտության հետ ոչ մի կապ չունեցող մոտիվներով:
Ստրախան-սլավոնապոլսկային ԵՍ — ասում է նա — ստեղծել այդ հակա-
դիտական «քեռիան»: Իշխողների, բռնակալների, շահագործողների քեռ-
իան է դա: Իմերիկայում հատկապես արդից խոնարհների զեմ մղված
պայքարի օրերին հարավային շտառների ստրկատերերին պաշտպանել են
դիտուն-մարդարանները, որոնք բավական պրիմիտիվ կերպով էլ հիմնա-
մուրել են իրենց հայացքները: Դրանց նման դիտուններ են եղել նաև ան-
տիկ աշխարհի հայտնի այն մտածողները, որոնք հնադրյան պատմաչառ-
նում ստրկատիրության պաշտպանության համար կառուցել են նույնպես
չորահատուկ «թևերի» ստրուկների մասին: Հասարակական կարծիքը—
նկատում է Չերնիշևսկին— մեծադույն ազդեցություն է թողնում մասնա-
գետների վրա, իսկ արդ հասարակական կարծիքն էլ ստեղծվում է որոշ
«դեպքերի» ազդեցության ներքո: Իսկական դիտության հետ կապ չունի
իշխողների պատգամախոսների ջանքերով կառուցված այդ «թևերի»:
Շատ խախուտ է հակասական է նա: Ֆեդերի կյանքի ֆիլիսոփայական անորոշ է:
Իմենչև այսօր էլ դիտականները փնտում են ցեղական հատկանիշների մա-
սին: Ժամանակին Պետալոցցիի և Հեդելի նման խոշոր գործիչները որո-
շակի կերպով հանդես են եկել հնորյա ուսմանների դեմ: Պատմության
8-րդ հատորին կցված է Չերնիշևսկու հայտնի հոդվածը ազգությունների
խլիվի մասին («О классификации людей по языку») և այդ 9-րդ հա-
տորին էլ՝ մի ուրվագիծ «ազգային նկարագրի» մասին («О различных
между народами по национальному характеру»):

¹ Н. Г. Чернышевский, т. X, ч. 2, էջ 81—206.

Առաջին հոգիածը բաժանական ընդարձակ մի հետադարձություն է: Հեն-
վելով իր օրերի լիզվադիտություն տվյալների վրա, Չերնիշևսկին իր առ-
ուսումնասիրության մեջ էլ ակնարկում է ժողովուրդների միասնության
մասին: Ֆիլոսոփիական փաստերը, նրա համոզմամբ, զգալի հարված են
հասցնում չովինիստական գիրքերի վրա կանգնած ազդադրադետներին:
Այդ հետադարձության մեջ նա նորից շեշտում է, որ Լվրոսկայան ազդու-
թյունները մի քանի չափազանց տարբեր ֆիզիկական տիպերի միության
հատվածներ են: Գաղթականական շարժումների շնորհիվ հաճախ ստեղծ-
վում են «ազդային» նոր միավորներ, որոնք հեղհեղ կտրվում են վաղե-
մի իրենց հայրենակիցներից: Հարափայլին կանադայի ֆրանսիացիները կա-
նադացիներ են: Դրանց լեզուն հին ֆրանսերենի նման է, իսկ կենցաղը՝
ֆլեմանգներին հալատակիող որսորդական խմբակներին հատուկ մի կենցաղ:
Հյուսիսային Ամերիկայի բնակիչների լեզուն անգլերենն է, թեև բազմա-
յան ժողովուրդների մի համախմբ է ամերիկյան ժողովուրդը: Դա ար-
դեն միանգամայն նորատիպ ամերիկյան ազդություն է, որ ստեղծել է և
ստեղծում է իր ինքնուրույն ազդային կուլտուրան:

Երկրորդ հոգիածի մեջ Չերնիշևսկին նշում է, որ միևնույն ազդու-
թյան առանձին հատվածներն էլ հաճախ զանազան հատկանիշներ ունեն:
Այսպես, օրինակ, անտիկ աշխարհի հույները միանման հատկանիշներ չեն
ունեցել: Աթենք, Սպարտա, Փոքր Ասիա — այդ բոլոր վայրերումս էլ
հանդես է եկել մեծ կուլտուրա կերտող հույն ժողովուրդը: Բայց այդ
վայրերում ապրող հույները միանման չեն եղել: Առանձին հունական վայ-
րերի բնակիչների լնդահատուկ գործերը և այսպես կոչված «ազդային
բարձրը» դարդանում և փոփոխվում են պատմա-հասարակական պայման-
ների (գեղնասական) — ինչպես Չերնիշևսկին է դրում մի տեղ) դարդացման
ազդեցությունները: Փոխվում են հասարակական կենցաղի պայմանները —
բնաանհրաժեշտորեն փոխվում են նաև տարբեր ժողովուրդների «բարոյա-
կան հատկությունները»: Հիմնովին սխալ է ենթադրել, թե կան ընդունակ
և անընդունակ, առաջին և երկրորդ կարգի ազդություններ: Պատմական
պայմաններն ունեն վճռական նշանակություն և այդ պայմաններն են ուժ
տալիս այսպես կոչված «ազդային» ունակությունների դարդացմանը: Շատ
ուշադրով է Պատմության Վերջ հատորի սեղմ առաջաբանը հայրենա-
սիրության մասին:

Ռուսների մեջ, ասում է Չերնիշևսկին, հազիվ թե լինեն իրենց ազդու-
թյունը չսիրող մարդիկ: Չկան այդպիսի մարդիկ: Յուրաքանչյուր ուս
սիրում է իր ազդությունը: Այդ սերն էլ պիտի դառնա Լյակետ և որոշ
չափանիշ ազդությունների նշանակության որոշման համար: Ահն՝ ուս-
ներս, շեշտում է Չերնիշևսկին, երախտադիտությամբ ենք վերաբերվում
բոլոր այն ազդություններին, որոնք օդտակար ազդեցություն են ունե-
ցել... Երախտազետ լինելով հանդերձ՝ մենք գիտենք, որ չի կարելի տմ-
բողջ ազդությունը պատասխանատվության կանչել այդ միևնույն ազդու-
թյան օրեկ հատվածի ձևներեցությամբ կատարված հանցագործության
համար: Շեշտակի հարված է հասցնում հրապարակախոսը չովինիստներին:
Հայրենասիրությունը վսեմ գգացում է, նկատում է նա: Սակայն իսկական
և վսեմ այդ հայրենասիրության հակառակ պատկերն է ազդայնական սնա-
փառությունը: Ազդասիրությունը չովինի դառնա ազդայնական սնափառու-

թյուն: Այդպիսի սյուռոտախոս շովինիստներ են դերման սեակցիոն պատմաբանները...

Անասելի բռնություններ են կատարել դերման դորքերը Խալիսայում, իսկ դերման պատմաբաններն անձիտ դավասանքներ չառնելով՝ փառաբանում են իրենց դաժան հայրենակիցներին: Այդպես մոտենալով պատմական դեպքերին, նրանք մեծ հարված են հասցնում հենց դերմանական ժողովրդին: Ինքը՝ Վերերը դուցե և աշխատել է դրել անաչառ պատմություն, սակայն ազդայանական սնափառությունը կուրացրել է նրան... Միանման սնափառություն չնորհիվ դերման պատմաբանները շովինիստական մեկնակետից են մոտեցել համաշխարհային պատմության պրոբլեմների լուսարանության: Չերնիշևսկին մանրամասն կանգ չի առնում դերման կալվածատերերի, պլանտատորների, յունկերների վրա: Նա բացահայտ կերպով չի նշում որ հիշված պատմաբանների դերադանց մեծամասնությունն իր իդեալներով և մտահայացողությունամբ կապված է եղել դերման ժողովրդի բռնակալ գառակարգների հետ: Իայց մեզ հայտնի են մեծ գիտնականի հայտարարությունները հասարակական գառակարգների և քաղաքական պարտիաների՝ դիտություն ու դրականության վրա ունեցած ազդեցության մասին: Չերնիշևսկու բոլոր երկերի մեջ էլ կան բազմաթիվ անարկներ այն մասին, որ դիտությունը, դրականությունը, արվեստը կտրված չեն կյանքից և միշտ կապված են հասարակական իրականության հետ: Այդ մասին շեշտվում է նաև վերերյան Պատմությանը կցված հոդվածների մեջ, որոնք իրենց առանձին թերություններով և վիճելի դրույթներով էլ չառ ցայտուն վավերագրեր են:

Չերնիշևսկու կողքին նշմարում ենք կարծես անցյալի առաջավոր ոուս դործչին, ոուս ժողովրդի արժատական ինտելիգենցիայի հրաշունչ այն ներկայացուցիչներին, որոնք ծառացել են դաժան անցյալի մոայլ ասպետների և շովինիստ-պատմաբանների դեմ...

Գուցե տեղին կլինի նկատել, որ հայ կլասիկ դրականության տկանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Միքայել Նայրանդյանը՝ մեր իրականության մեջ առաջինն է եղել, որ խիստախորհն կովի է ելել ազդատյացության և մարդատյացության բոլոր մունետիկների դեմ:

Հայտնի են Նայրանդյանի «Երկրադործություն» մեջ նկատված սուր դիտողությունները «վերացական ազդության» ջատադուրների մասին: Բնութագրելով բռնակալ պետությունների ազդահալած քաղաքականությունը և խարադանելով ամստրո-դերման դեպոտիայի մոայլ ասպետներին, նա ներքող է ձոնում ժողովուրդների Լորայրության վեհապանծ իդեալին: Նշանակալից ակնարկները կարելի է դոնել նաև «Հյուսիսստիայ»-ի մեջ: Կովի ելնելով ազդայանական սնափառության դեմ, մեր մեծ հրապարակախոսը հանդես է եկել որպես Սո-ական թվականների ոուս մոհիկանների՝ Բելինսկու, Դերցենի, Պիսարևի, Դորբոյուրովի, Չերնիշևսկու հետևող և դինակից: Կասկածից դուրս է, որ նրան լավ էին հայտնի «Ուրբեմեկնիկ»-ի մեջ հրապարակված նյութերը և ուսումնասիրությունները: Այդ մասին ակնարկվել է արդեն մեր մամուլի էջերում:

Չերնիշևսկու հայտնի հոդվածներն արտասահմանյան անց ու դարձի

բաղադրական դեղքերի մասին հայտնի էին Նալբանդյանին՝ Իտալացի աղ-
ջրկա հայրենասիրական հայտնի երգը Նալբանդյանը գրել է իտալական ժո-
ղովրդի աղլային—աղատադրական շարժումների, զուցե նաև իտալական
«դեպերի» մասին Չերնիշևսկու գրած հոդվածների աղլեցության ներքո:
Հատ հավանական է, որ Չերնիշևսկու սեյենդիան Բակստի ճառի մասին
(1857 թ.) նույնպես հայտնի էր «Հյուսիսափայլ»-ի գործիչներին:

Վաթսունական թվականների սոստարժատական հրապարակախոսների թր-
նադիտական—հասարակագիտական երկերն էլ հայտնի էին Նալբանդյանին:
Չերնիշևսկու նման նա րնդգծում էր շատ կարուկ կերպով: «Կամք չունենալ
ազդուժյունը կույր ֆանատիկոսությունը պարձել: Հերիք է, որչափ կույր
և ֆանատիկական ազդուժյունը ունի յուր էսական կողմերը. հերիք է,
ասում ենք, որ մի ազդուժյունը յուր մի շաճիտը խորովածի համար մոր-
թում է մյուս ազդուժյանը էսր»... (Երկեր, հատ. II, էջ 361):

Նալբանդյանը ճիշտ հետևելով Չերնիշևսկուն, վճռական կերպով խա-
րաղանել է հին օրերի շովինիստներին՝

Մեծ հայրենասեր Չերնիշևսկու էնտուզիաստ—հետևողների մեջ հայ
ժողովրդի մեծ հրապարակախոս Նալբանդյանը շատ ակտիվ դեմք էր: Իր
խիղիսը գործունեությունը համար նա նեւովում է Պետրոպոլիսյան ամբոյի
Ուլեյսեյան Բաֆելինը: Բաֆելինում նա գրում է թե՛ իր հայտնի նամակ-
ները և թե՛ գրական—քննադատական րնդարձակ ուսումնասիրություն: Նա
անսահման սիրով երգել է ճնշված ժողովուրդների աղլային—աղատադրա-
կան սլաշարի վսեմ իդեալները, տարածել է Դորրոլյուրովի և Չերնիշև-
սկու զաղափարները, աննկուն եռանդով կոփի էլել դերման րոնակայնե-
րի և րոնակայնիին սպասալորող հնօրյա «ոսսիտ» դիտունների դեմ:

Այսօր կարելի է և անհրաժեշտ է խոսել մարդատյացության ու վան-
դալիզմի դեմ մարտնչող նվիրական հին գործիչների մասին:

Դիտություն հեռ ամենահեռու առնչություն անդամ չունին այսօրվա
հիսլերյան Փաշիստների ցնդարանական մարդանքները: Տակավին վաթսու-
նական թվականներին է մերկացվել հնօրյա ոսսիտների հակադիտական
էությունը: Այսօրվա Փաշիստ զդիտունները միայն արսուրդի են հասցրել
թրենց հեռու նախահայրերի վաղուց ջախջախված ձեռքերին:

... Մեր օրերին, երբ մեծ Սովետական Միության հերոսական կար-
միր Բանակը ջախջախիչ հարվածներ է հասցնում սև ուժերի մահաճեղճ
հրոսակներին, երկու մեծ հայրենասերների՝ Չերնիշևսկու և Նալբանդյանի
հեռու սովերներն էլ դառնում են, կարծես, ավելի կենդանի և խոսուն:

1 Տե՛ս՝ Լ. Գաբրիելյան—Միքայել Լալբանդյանը և րնագիտությունը. (ՍՍՌՄ Գի-
տությունների Ազգայնագիտական Ֆիլիալի Տեղեկագիր № 1, Երևան, 1940), նաև Լ.
Գաբրիելյանի վերջերս կարդացած զեկույցը (Երևանի Մանկավարժական ինստիտուտի
սեմինար)—«Բիոլոգիան և ոսսայական թեորիան», 1943 թ.